ՏԵՔՍՏԸ
ՇԻՈ ՄՂՎԻՄԵԼՈՒ
ՆԿԱՐՆԵՐԸ
ՍԵՎԵՐԻԱՆ ՄԱՅԻՍԱՇՎԻԼՈՒ

# ԹԲԻԼԻՍԻԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳԻՆ





899.962.15
Մ-81

ՊԵՏՀՐԱՏ
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՅԵՐԵՎԱՆ 1938

Դեպի Վերա, ջրի ափով,
Թե մարդ անցնել չծուլանա,
Թեկուզ գնա տրամվայով՝
Ուրախ ժամեր շատ կունենա։
Նա կտեսնի շրջող, ազատ
Կենդանիներ՝ մեծ պուրակում,
Յերկկենցաղներ՝ թռչուն, գազան,
Ցանկապատած սիրուն այգում։
Նրանց կեր է տրվում կարգին,
Հետևում են գիշեր ու զոր,
Յեվ շնորհիվ այդ խնամքի՝
Բազմացել են նրանք այսոր։
Խառնվել են՝ գազան, թռչուն,
Ծվծվոցներ ու մռնչյուն,
Դժգոհ վռնոց, հոգնած կռանչ,
Մի ուրիշ տեղ՝ ուրախ կլանչ։
Ժայռից աղբյուրն է խոխոջում,
Սիպտակ արջն է զուլալ լճում,
Կկոցում է աչքերն իրա,
Լվանում է վիզն ու իրան։

03 JUL 2013
899.962.1Մ
Մ-81 ար
14063
5591

Նա դուրեկան է այնպես,
Վախ կա խոշոր աչերում,
Յեվ հպարտ է և՛ միշտ հեզ—
Մեր շատ ճկուն յեղջերուն։

2011-07



Սատանա յե, պոչը՝ թավ,
Միշտ բներն է սողոսկում,
Փախցնում է սագ ու հավ,
Գող աղվեսն է մի խոսքով։



Պոչը յերկար, իմաստուն,
Նրան աղվես չկարծե՛ք,
Շուրջը սարսափ ե սփռում,
Այն վագրն ե՝ իմացեք։



Փնթփնթացող անհավան է,
Մեղր ու սիմինդ*) է չանչում,
Բրդակոլոլ մի գազան է
Արջին ով չի ճանաչում։



*) Սիմինդ—Եգիպտացորեն։

Թողնես հոտը կու՞լ կտա,
Գայլն է, պիտի գուշակել,
Այնպես ագահ, անպիտան,
Անտանելի շատակեր։



Սա մեր առյուծն է հպարտ.
Թաթերն ուժեղ են իրոք,
Մաշկի գույնը դեղնավառ,
Յե՛վ հզոր է, և՛ խելոք։



Զարմանալի յե, նայե՛ք,
Շերտավոր ու գեղեցիկ,
Աֆրիկական զեբրա յե՝
Ուրիշ խոսքով՝ վայրի ձի։



ՀՍՍՀ-ССР А.
им. А. Мясникяна





Ծիծաղելի, անպիտան,
Յեվ աչքածակ, և՛ անկուշտ,
Նմանվող սրան-նրան,
Ո՜, սա կապիկն է անշուշտ։



Հաջողվում է զրուցել,
Այն էլ մարդու պես հստակ,
Այն թութակն է բազմացեղ,
Ճերմակ, կարմիր, կապուտակ։



Վոչ խնդրել է պետք, վոչ թակել,
Վազելու մեջ մեկն է անպայման,
Դա մեր ջայլամն է իհարկե
Փետուրը կարճ ու մեծիրան։



*Թե նայես սիրամարգին,*
*Չես հոգնի, չես էլ հագենա,*
*Գունազարդ պոչով ահագին*
*Աննման գեղեցիկն է նա...*



Մեր չորքոտանին ապրում է ծովում,
Սպիտակ արջն այս՝ շատ ծանրաշարժ է,
Թե վոր բարկացավ, խիստ է խռովում,
Այն, նրանից սարսափելն արժե։



ՀՍԽՀ-ССРА
им. А. Мясникяна

Վրացերենից թարգմանեց՝ Աշոտ Շայբոն
Խմբագիր՝ [redacted]
Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբագրիչ՝ Ս. Արզաքանյան

Գլավլիտի լիազոր՝ Ա—4005 Հրատ. № 4392.
Պամուլներ 30. Տիրաժ 5000.
Հանձնված է արտադրության 2 հունվարի 1938 թ.
Ստորագրված է տպագրության համար 20 մարտի 1938 թ.

Պետհրատի I տպարան, Երևան, Լենինի 65

ՀՀ Ազգային գրադարան
NL0387850

Գինը 1 ռ.

19065

ШИО МГВИМЕЛИ
ТБИЛИСКИЙ ЗООПАРК
Гиз. Арм. ССР, Ереван 1938 г.